

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

1

Նկարում  $n^{\circ}$  թվով է նշված հարավային ցուրտ ջերմային գոտին.



- 1) 1
- 2) 2
- 3) 4
- 4) 5

2


$\Omega^{\circ}$  ըն է ամենափոքր մասշտաբը.

- 1) 1 : 25 000
- 2) 1 : 250 000
- 3) 1 : 2 500 000
- 4) 1 : 25 000 000

3

Նկարում  $\Phi$  կետը հորիզոնի  $n^{\circ}$  թ կողմում է.

- 1) հյուսիսարևելյան
- 2) հյուսիսարևմտյան
- 3) հարավարևմտյան
- 4) հարավարևելյան



4

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Երկիրը սեփական լույսը ստանում է Լուսնից:
- 2) Իր առանցքի շուրջը Երկիրը պտտվում է 1 ժամում:
- 3) Միջօրեականներն իրար հավասար են:
- 4) Ամսաթվի փոփոխման գիծն անցնում է Գրինվիչի միջօրեականով:

5

Օվկիանոսների հատակում տեղի ունեցող երկրաշարժերից առաջանում է կործանիչ ալիք, որը կոչվում է.

- 1) տեղատվություն
- 2) ցիկլոն
- 3) ցունամի
- 4) մակրնթացություն

6

Կլիմայական քարտեզի վրա նույն պահին հավասար ջերմաստիճան ունեցող վայրերը միացնող գիծը կոչվում է.

- 1) իզոբաթ
- 2) իզոբար
- 3) իզոթերմ
- 4) իզոհիպս

7

Բնատարածքային համալիրների փոփոխությունն ըստ բարձրության կոչվում է.

- 1) վերընթաց գոտիականություն
- 2) հորիզոնական զոնայականություն
- 3) աշխարհագրական թաղանթ
- 4) ջերմաստիճանային շրջադասություն


8

Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը –  $14^{\circ}$  է, իսկ նույն պահին ստորոտում +  $4^{\circ}$ : Օդի ճնշումը գագաթին 380 մմ է: Օդի ճնշումը Լեռան ստորոտին կլինի (հաշվարկը կատարել  $6^{\circ}$ -ով).

- 1) 80 մմ
- 2) 365 մմ
- 3) 395 մմ
- 4) 680 մմ


9 Նկարում Ա տառով նշված է Երկրի.

- 1) միջուկը
- 2) միջնապատյանը
- 3) թույլուրտը
- 4) երկրակեղևը



10 Նկարում պատկերված է.

- 1) ամառային մուսսոն
- 2) գիշերային բրիզ
- 3) ցերեկային բրիզ
- 4) ձմեռային մուսսոն



11 «Հարթավայր — աշխարհամաս» գույգից ընտրել սխալը.

- 1) Միջագետքի — Ասիա
- 2) Դեկանի — Ասիա
- 3) Հյուսիս-Գերմանական — Եվրոպա
- 4) Լենքորանի — Եվրոպա

12 Բնութագրումով որոշել բնական զոնան.

*Այդ բնական զոնայում ձմեռը ցուրտ է, ամառը՝ տաք: Տեղումների տարեկան քանակը 400–500 մմ է: Գերակշռում է խոտային բուսականությունը: Ո՞րն է այդ բնական զոնան.*

- 1) սավաննան
- 2) տափաստանը
- 3) անապատը
- 4) տունդրան

13

**Բնութագրումով որոշել թերակղզին.**

*Այդ թերակղզին Հարավային Եվրոպայում է: Արևմտյան ափերը ողողում են Տիրենյան, արևելյանը՝ Ադրիատիկ ծովերի ջրերը: Հարավում այն նեղուցով անջատվում է Սիցիլիա կղզուց: Ո՞ր թերակղզին է.*

- 1) Պիրենեյան
- 2) Ապենինյան
- 3) Բալկանյան
- 4) Փոքր Ասիա

14

**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Երկրի գնդաձևության շնորհիվ նույն պահին նրա մակերևույթի տարբեր աշխարհագրական լայնություններում Արեգակի ճառագայթներն ընկնում են տարբեր անկյան տակ:
- 2) Երկրագունդը էլիպսաձև է և հասարակածից ավելի շատ է սեղմված, քան բևեռներից:
- 3) Ամենաերկար միջօրեականը գլխավոր կամ գրոյական միջօրեականն է:
- 4) Հավասարանկյուն պրոյեկցիայում աղավաղվում են միայն անկյունները, իսկ օբյեկտների մակերեսները և գծերի երկարությունները չեն աղավաղվում:

15

**Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Հասարակածային կլիմայական գոտում օդի ջերմաստիճանը միշտ բարձր է, իսկ տեղումների քանակը՝ շատ:
- 2) Արևադարձային օդային զանգվածներն ունեն վարընթաց շարժում. իջնելիս տաքանում են և չորանում:
- 3) Արկտիկական և անտարկտիկական օդային զանգվածները չոր են, ցուրտ և շատ թափանցիկ:
- 4) Մերձհասարակածային կլիմայական գոտի ամռանը թափանցում են արևադարձային չոր ու շոգ, իսկ ձմռանը՝ բարեխառն խոնավ և մեղմ օդային զանգվածները:

16

**«Լիճ — թափվող գետ» գույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Մեծ աղի — Կոլորադո
- 2) Վանա — Եփրատ
- 3) Կասպից — Վոլգա
- 4) Տիտիկակա — Ամազոն

17

«Գետ — հորդացման սեզոն» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Տիգրիս — ձմեռ
- 2) Յանգզի — գարուն
- 3) Օրինկո — ամառ
- 4) Նիգեր — ձմեռ

18

Ավստրալիայում ամենաշատ խոնավություն ստանում է (են).

- 1) Էյր լճի ավազանը
- 2) մայրցամաքի ներքին շրջանները
- 3) մերձհասարակածային գոտին՝ հասարակածային մուսսոնների տեսքով թափանցած պասսատների շնորհիվ
- 4) Մեծ ջրբաժան լեռնաշղթայի հյուսիսային հատվածի հողմակողմ լեռնալանջերը

19


Ո՞ր կղզիներն են քարտեզում նշված Դ տառով.

- 1) Փոքր Անտիլյան
- 2) Տոկլենդյան
- 3) Բերմուդյան
- 4) Մեծ Անտիլյան

20

Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզում նշված Է տառով.

- 1) Մոնտեվիդեո
- 2) Բուենոս Այրես
- 3) Լիմա
- 4) Սանտյագո



21

Բնակչության աշխատունակ մասը, աշխատող մեծահասակներն ու երեխաները, որոնք իրենց ֆիզիկական կարողություններով, գիտելիքներով և փորձով կարող են աշխատել տնտեսության որևէ բնագավառում, կոչվում է.

- 1) ժողովուրդ
- 2) ռասա
- 3) աշխատանքային ռեսուրս
- 4) տնտեսապես ակտիվ բնակչություն

22

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Տարաբնակեցումը որոշակի տարածքում ձևավորված արտադրական ձեռնարկությունների ամբողջությունն է:
- 2) Քոչվոր տարաբնակեցումն առկա է Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում:
- 3) Ցրված տարաբնակեցումն առավել տարածված է ագարակային (ֆերմերային) գյուղատնտեսություն ունեցող երկրներում:
- 4) Ժողովրդագրական գործոնը տարաբնակեցման վրա չի ազդում:

23

Բնութագրումով որոշել պետությունը.

*Գերխոշոր պետություն է: Հարուստ է ջրային և անտառային ռեսուրսներով: Աչքի է ընկնում երկաթաքարի արդյունահանմամբ և արտահանմամբ: Ո՞ր պետությունն է.*

- 1) Չինաստան
- 2) Ավստրալիա
- 3) Իրան
- 4) Բրազիլիա

24

Երկրի բնակչության թիվը 20 մլն մարդ է, գյուղական բնակչության թիվը՝ 5 մլն: Ուրբանիզացման մակարդակը կլինի.

- 1) 20 %
- 2) 35 %
- 3) 50 %
- 4) 75 %

25

«Ծողովուրդ — լեզվախումբ» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) ուկրաինացի — սլավոնական
- 2) իսպանացի — ռոմանական
- 3) տաջիկ — թուրքական
- 4) անգլիացի — գերմանական

26

Տրվածներից ո՞րը ցամաքային սահման ունի միայն մեկ երկրի հետ.

- 1) Կանադան
- 2) Հունաստանը
- 3) Իսպանիան
- 4) Պերուն

27

Թելատու տեխնիկական մշակաբույսեր են.

- 1) արևածաղիկը և ցորենը
- 2) սոյան և ձիթապտուղը
- 3) բամբակենին և վուշը
- 4) գարին և բրինձը

28

Ճապոնիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.

- 1) Մեքենաշինության ճյուղային կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն նավաշինությունը, էլեկտրոնային և ռադիոտեխնիկական մեքենաշինությունը:
- 2) Սև մետաղների հումքի աղքատ պաշարների պատճառով երկրում զարգացած չէ սև մետաղաձուլությունը:
- 3) Հացահատիկային գլխավոր մշակաբույսը բրինձն է:
- 4) Բնակչության սննդակարգի մեջ մեծ է ձկան ու ծովային մթերքների բաժինը:

29

Բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակների բաժինը համեմատաբար մեծ է.

- 1) Չինաստանում և Հնդկաստանում
- 2) Իրանում և Պակիստանում
- 3) Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում
- 4) Թուրքիայում և Հունաստանում



30 **Բացարձակ միապետություններ են.**

- 1) Ռուսաստանը և Ֆրանսիան
- 2) Սաուդյան Արաբիան և Բրունեյը
- 3) Իսպանիան և Ճապոնիան
- 4) Գերմանիան և Ավստրալիան

31 **Սուրճի մշակությամբ առաջատար երկրներ են.**

- 1) Կոլումբիան և Ինդոնեզիան
- 2) Ֆրանսիան և Հունաստանը
- 3) Հնդկաստանը և Շրի Լանկան
- 4) Ուզբեկստանը և Թուրքիան

32 **«Գետ — ավազան» գույգերից ընտրել սխալը.**

- 1) Եփրատ — Պարսից ծոց
- 2) Ճորոխ — Սև ծով
- 3) Արաքս — Կասպից ծով
- 4) Կուր — Միջերկրական ծով

33 **Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Լեռնային սևահողերում հումուսի պարունակությունը 1–2% է:
- 2) Կիսաանապատային գորշ հողերը հումուսով աղքատ են:
- 3) Մարգագետնատափաստանային հողերը հումուսով հարուստ են:
- 4) Լեռնաանտառային գորշ հողերը հումուսով ավելի հարուստ են, քան կիսաանապատային գորշ հողերը:

34 **Հայերը կազմում են ՀՀ բնակչության.**

- 1) 93 %-ը
- 2) 90 %-ը
- 3) 96 %-ից ավելին
- 4) 88 %-ը

35


ՀՀ տրանսպորտի բեռնաշրջանառության և ուղևորաշրջանառության աճը հիմնականում պայմանավորված է.

- 1) փոխադրումների հեռավորության աճով
- 2) տրանսպորտային նոր միջոցների շահագործմամբ
- 3) բեռների ծավալի և ուղևորների թվաքանակի աճով
- 4) տրանսպորտային նոր ուղիների արագ կառուցմամբ

36

Ո՞ր ջրամբարն է քարտեզում նշված Դ տառով.

- 1) Տոլորսի
- 2) Կեչուտի
- 3) Սպանդարյանի
- 4) Շամբի



37

Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված Ը տառով.

- 1) Վեդի
- 2) Ջերմուկ
- 3) Եղեգնաձոր
- 4) Վայք

38

**Երկաթաքարի հանույթով առաջատար երկրներ են.**

- 1) Ճապոնիան և Չինաստանը
- 2) Բրազիլիան և Կանադան
- 3) Սաուդյան Արաբիան և Իրաքը
- 4) Ուկրաինան և Հայաստանը

39

**Մթնոլորտի մարդածին աղտոտման աղբյուր է.**

- 1) հրաբուխը
- 2) ավտոտրանսպորտը
- 3) լեռնային ապարների քայքայումը
- 4) փոշեհողմը

40

**Մթնոլորտի ստորին շերտի տաքացումը ջերմոցային գազերի ու Երկրի մակերևույթից արձակվող երկարալիք ճառագայթների կողմից կոչվում է.**

- 1) ջերմոցային էֆեկտ
- 2) ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա)
- 3) ջերմաստիճանի տատանման լայնույթ
- 4) ջերմոցային տնտեսություն

41

**Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Հնդկական օվկիանոս.**

- |            |             |
|------------|-------------|
| 1) Մուրեյ  | 5) Տիգրիս   |
| 2) Ինդոս   | 6) Օրանժ    |
| 3) Մեկոնգ  | 7) Նիգեր    |
| 4) Զամբեզի | 8) Սիրդարյա |

42

Գրել այն երկրների համարները, որտեղ արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում ջրաէլեկտրակայաններին.

- |              |             |
|--------------|-------------|
| 1) Ռուսաստան | 5) Կանադա   |
| 2) ԱՄՆ       | 6) Նորվեգիա |
| 3) Գերմանիա  | 7) Լիտվա    |
| 4) Ֆրանսիա   | 8) Ուկրաինա |

43

Գրել Հայկական հրաբխային բարձրավանդակի հարավային մասի լեռնագրական միավորների համարները.

- |                        |                           |
|------------------------|---------------------------|
| 1) Ծաղկանց լեռներ      | 5) Բյուրակնի լեռնազանգված |
| 2) Աչքասար լեռ         | 6) Գեղամա լեռնազանգված    |
| 3) Ախալքալաքի սարավանդ | 7) Թոնդրակ լեռ            |
| 4) Ծղուկ լեռ           | 8) Կապուտջուղ լեռ         |

44

Տրված պետությունները դասավորել տարածքի մեծության նվազման կարգով.

- 1) Չինաստան
- 2) Ռուսաստան
- 3) Կանադա
- 4) ԱՄՆ

**ՀՀ կլիմայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

- 1) Հանրապետության տարածքը արևադարձային կլիմայական գոտում է:
- 2) Տարվա տաք կեսին տիրապետում են Իրանական բարձրավանդակից թափանցող արևադարձային օդային զանգվածները:
- 3) Տարվա ընթացքում առավելագույն տեղումները լինում են նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:
- 4) Տարվա ընթացքում ամենաշատ ամպամած օրերը լինում են Գեղարքունիքի մարզում (Մարտունի):
- 5) ՀՀ-ում միջլեռնային գոգավորությունների ցածրադիր մասերում ձմռանը դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):
- 6) ՀՀ-ում կլիմաստեղծ գործոններից են մուսսոնները:

## Բ մակարդակ

46 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Գրինվիչի աստղադիտարանի վրայով անցնող գուգահեռականն ընդունված է անվանել հասարակած:
- 2) Երկրագնդի ամենամեծ շրջագիծը գլխավոր միջօրեականն է:
- 3) Գնդաձևության շնորհիվ հասարակածից դեպի բևեռներ ջերմությունն աստիճանաբար նվազում է:
- 4) Իր առանցքի շուրջը պտտվելու հետևանքով Երկիրը բևեռային շրջաններում «փքվել է», իսկ հասարակածում՝ սեղմվել:

47 Ո՞ր լայնություններին են բնորոշ ամբողջ տարվա ընթացքում մթնոլորտային բարձր ճնշման մարզերը.

- 1) արկտիկական և արևադարձային լայնություններին
- 2) բարեխառն և հասարակածային լայնություններին
- 3) արևադարձային և բարեխառն լայնություններին
- 4) հասարակածային և արևադարձային լայնություններին

48 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Օվկիանոսային տաք հոսանքները նպաստում են կլիմայի ցրտեցմանն ու մթնոլորտային տեղումների նվազմանը:
- 2) Օվկիանոսային սառը հոսանքներից տեղի է ունենում ջրի ակտիվ գոլորշացում:
- 3) Օվկիանոսի հատակի մինչև 200 մ խորություններն անվանում են մայրցամաքային լանջ:
- 4) Օվկիանոսի այն մասերում, որտեղ գոլորշացումը մեծ է, և գետեր չեն թափվում, ջրի աղիությունը միջինից բարձր է:

49

**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Պասաստները տեղումներ են առաջացնում մայրցամաքների արևմտյան ափերին:
- 2) Մուսսոնային կլիմա ունեցող շրջաններում տեղումների մեծ մասը թափվում է ամռանը:
- 3) Տորնադոն և թայֆունը արևադարձային հզոր անտիցիկլոններ են:
- 4) Կլիմայի ցամաքայնության մեծացմանը զուգընթաց ամռան միջին ջերմաստիճանը նվազում է:

50

**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Անտարկտիկական Անդերը ալպյան հասակի լեռներ են:
- 2) Ավստրալական պլատֆորմը արևելքից եզրավորված է երիտասարդ ծալքավոր լեռներով:
- 3) Բրազիլական սարահարթում գերիշխում են սառցադաշտերի գործունեությամբ առաջացած մակերևույթի ձևերը:
- 4) Աֆրիկյան պլատֆորմը զբաղեցնում է միայն մայրցամաքի ծայր հյուսիս-արևմտյան նեղ ծովափնյա մասը:

51

**Աշխարհում ամենամեծ թվով ներգաղթածներ ունեցող երկրներից են.**

- 1) Չինաստանը և Մոլդովան
- 2) Ճապոնիան և Կորեան
- 3) ԱՄՆ-ը և Գերմանիան
- 4) Հնդկաստանը և Ուզբեկստանը

52

**Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Երբ ծնելիությունը հավասար է մահացությանը, վերարտադրությունը կոչվում է պարզ:
- 2) Ջարգացող երկրներին բնորոշ է նեղ հիմքով, համեմատաբար լայն գագաթով սեռատարիքային բուրգ:
- 3) Ջարգացած երկրներում՝ բնակչության սեռային կազմում, կանանց թիվը գերազանցում է տղամարդկանց թվին:
- 4) Եվրոպական երկրներում ձևավորվել է բնակչության վերարտադրության առաջին տիպը:

53

«Անասնապահության ճյուղ — առաջատար երկիր» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) կաթնային անասնապահություն — Ալժիր
- 2) ոչխարաբուծություն — Ֆինլանդիա
- 3) խոզաբուծություն — Թուրքիա
- 4) մսատու անասնապահություն — Արգենտինա

54

Իրանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հարուստ է նավթի ու բնական գազի պաշարներով:
- 2) Ռադիոէլեկտրոնային սարքավորումներ, ռոբոտներ արտադրող առաջատար երկիր է:
- 3) Յուրացված ու բերրի տարածքներից է Հարավկասպիական դաշտավայրը:
- 4) Անապատային, կիսաանապատային ու լեռնային շրջաններում զբաղվում են ոչխարաբուծությամբ:

55

Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բնորոշվում է բնակչության պարզ վերարտադրությամբ:
- 2) Էլեկտրաէներգիայի արտադրության մեջ մեծ է ջեկերի բաժինը:
- 3) Աճեցվող հիմնական հացահատիկային մշակաբույսը բրինձն է:
- 4) Տեքստիլ արդյունաբերության խոշոր կենտրոնը Մանչեսթրն է:

56

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հայկական լեռնաշխարհի հարավային մասում՝ Միջագետքի հարևանությամբ, ձգվում է Ներքին Տավրոսի լեռնային համակարգը:
- 2) Հայկական լեռնաշխարհն արևելքից սահմանակցում է Արաբական սարահարթին:
- 3) Հայկական հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասում վեր են խոյանում Արագած ու Գեղամա լեռնազանգվածները:
- 4) Հայկական լեռնաշխարհի հարավային մասում ձգվում է Հայկական պար լեռնաշղթան:



57

Ընտրել «գետ — վտակ» համապատասխանության ճիշտ շարքը.

- |            |           |
|------------|-----------|
| 1. Դերեղ   | ա. Գետիկ  |
| 2. Աղստև   | բ. Քասաղ  |
| 3. Արփա    | գ. Փամբակ |
| 4. Մեծամոր | դ. Եղեգիս |

- 1) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
- 2) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
- 3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-գ
- 4) 1-ա, 2-բ, 3-ա, 4-գ

58

ՀՀ-ում ո՞ր բարձրություններում է բնակչության միջին խտությունն ամենաբարձրը.

- 1) 1000–1500 մ
- 2) 2000–2500 մ
- 3) մինչև 1000մ
- 4) 1500–2000 մ

59

«Հանքավայր — օգտակար հանածո» զույգերից ընտրել *սխալը*.

- 1) Կապան — պղնձամոլիբդեն
- 2) Շվանիձոր — նեֆելինային սիենիտ
- 3) Սվարանց — երկաթաքար
- 4) Ագարակ — պղնձամոլիբդեն

60

**Վայոց ձորի մարզի համար n<sup>o</sup> ր պնդումն է ճիշտ.**

- 1) Բնական անտառների զբաղեցրած մակերեսը հանրապետության միջին ցուցանիշից ցածր է:
- 2) Տարածքում հայտնաբերվել են պղնձամոլիբդենային հարուստ հանքավայրեր:
- 3) Բացարձակ բարձրությունների տարբերությունը փոքր է:
- 4) Արևելքից սահմանակից է Արարատի մարզին:

61

**ՀՀ տրված լճերի համարները դասավորել հյուսիսից հարավ հաջորդականությամբ.**

- 1) Քարի
- 2) Արփի
- 3) Սև

62

**Գրել մոլիբդենի հանքանյութի արդյունահանման կենտրոնների համարները.**

- |             |           |
|-------------|-----------|
| 1) Կապան    | 5) Ագարակ |
| 2) Շամլուղ  | 6) Արարատ |
| 3) Ալավերդի | 7) Ախթալա |
| 4) Քաջարան  | 8) Սոթք   |

63

**Գրել այն երկրների համարները, որտեղ բնակչության կյանքի միջին տևողությունը բարձր է.**

- |              |             |
|--------------|-------------|
| 1) Հնդկաստան | 5) Նիգեր    |
| 2) Բանգլադեշ | 6) Նորվեգիա |
| 3) Տաջիկստան | 7) Կամերուն |
| 4) Ճապոնիա   | 8) Անգոլա   |

64

**Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են ոչխարաբուծությամբ.**

- |                 |              |
|-----------------|--------------|
| 1) Իրան         | 5) Արգենտինա |
| 2) Գերմանիա     | 6) Ուկրաինա  |
| 3) Կանադա       | 7) Ճապոնիա   |
| 4) Նոր Զելանդիա | 8) Լեհաստան  |

65 Երկու քաղաքներ հասարակածի վրա են: Դրանցից մեկը արլ. ե.  $40^\circ$ -ի վրա է, իսկ մյուսը՝ արմ. ե.  $70^\circ$ -ի: Որոշել քաղաքների ամենակարճ հեռավորությունը կիլոմետրով:

(66-67) Երկրի բնակչության թիվը 90 000 է, բնական աճի գործակիցը՝ 15 %: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 1800 մարդ, արտագաղթը՝ 700 մարդ:

66 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

67 Որոշել բնակչության թիվը մեկ տարի անց:

(68-69) Քաղաքում օրվա ընթացքում չափել են օդի ջերմաստիճանը և ստացել են՝  $-1^0, -4^0, -6^0, -2^0, 7^0, 16^0, 10^0, 4^0$ :

68 Որոշել ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը (ամպլիտուդ):

69 Որոշել օդի օրական միջին ջերմաստիճանը:

ՀՀ բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Եզդիների մեծ մասը բնակվում են Արագածոտնի և Արմավիրի մարզերի գյուղական բնակավայրերում:
- 2) Մինչև 1000 մ բարձրությունները ՀՀ ամենանոսրաբնակ տարածքն է:
- 3) 1988-1990 թթ. ավելի քան 180 հազ. ադրբեջանցիներ Հայաստանից հեռացան, իսկ ազատված բնակավայրերում հաստատվեց Ադրբեջանից արտաքսված հայությունը:
- 4) ՀՀ բնակչության կեսից ավելին բնակվում է 1500-2500 մ բացարձակ բարձրության գոտում:
- 5) Բնակչության թվով երրորդ քաղաքը Գյումրին է:
- 6) ՀՀ-ն իր հարևան պետությունների համեմատ բնակչության բարձր խտություն ունեցող երկիր է: